

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2010թ. նոյեմբերի 17-ին
կայացած թիվ 3 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Գիտական թեմատիկ ֆինանսավորման թեմաների հաստատում:
 2. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
 3. Ընթացիկ հարցեր:
-

Խորհուրդը առաջադրեց ՀՀ ԿԳ նախարարության կողմից առաջարկված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման նպատակով գիտական թեմաները.

1. **ԼՍԵՑԻՆ.** - Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արծրուն Ավագյանի «Եղեռնապատումը հայ դասական գրականության մեջ» թեման ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման թեմաներում ընդգրկելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, դոց. Ա. Բեքմեզյանը:

Նշվեց, որ Ա. Ավագյանի առաջադրած գիտական թեման ընդգրկում է, պարունակում է դեռևս չլուսաբանված հիմնախնդիրներ և հարցը ներկայացնելու խնդրադրությամբ /պրոբլեմատիկ/ հայեցակետ: Այն ունի խիստ արդիական նշանակություն: Ավարտվելուց հետո այն արժևորման և վերլուծական յուրօրինակ տուրք կլինի Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին և հայ գրականության պատմության լուսաբանման գործին:

2. **ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հաշվի առնելով հայ նորագույն գրականության ամբիոնի հիմնավորումը թեմայի գիտական, խնդրադրությամբ և գործնական նշանակության մասին՝ երաշխավորել Արծրուն Ավագյանի ղեկավարությամբ «Եղեռնապատումի հայ դասական գրականության մեջ» թեման պայմանագրային ֆինանսավորման ծրագրային գիտական մրցույթին մասնակցելու համար:

3. **ԼՍԵՑԻՆ** – Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Յուրի Ավետիսյանի «Արևմտահայ քերականագիտության պատմություն» թեման ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման թեմաներում ընդգրկելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Եզեկյանը և Լ. Թելյանը:

Նշվեց, որ վերջին տասնամյակներում զգալիորեն մեծացել է հետաքրքրությունը արևմտահայերենի նկատմամբ, և նրա լավ ճանաչումը կարող է նպաստել ինչպես հայոց լեզվի երկու տարբերակների մերձեցման, այնպես էլ հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործին: Չնայած արևմտահայերենի քերականագիտական միտքը արևելահայերենի համեմատությամբ շատ ավելի վաղ է ձևավորվել՝ անցնելով մշակման ու զարգացման հարուստ ճանապարհ, սակայն դեռևս չկա արևմտահայ քերականագիտության պատմությունը համակողմանիորեն ներկայացնող աշխատություն: Առաջարկվեց որպես ուսումնասիրության նյութ ընտրել հետևյալ թեման՝ «Արևմտահայ քերականագիտության պատմություն»:

վերջինիս միջոցով կստեղծվի արևմտահայերենի քերականագիտության ձևավորումն ու զարգացումը արտացոլող ամբողջական գիտական ուսումնասիրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Հաշվի առնելով սփյուռքագիտության ամբիոնի հիմնավորումը թեմայի գիտական, խնդրադրությային և գործնական նշանակության մասին՝ երաշխավորել «Արևմտահայ քերականագիտության պատմություն» թեման պայմանագրային ֆինանսավորման ծրագրային գիտական մրցույթին մասնակցելու համար:

4. ԼՍԵՑԻՆ – Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Սաքապետոյանի «Արևմտահայերենի գիտական քերականություն» թեման ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման թեմաներում ընդգրկելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Եզեկյանը և Լ. Թելյանը:

Նշվեց, որ վերջին տասնամյակներում մեծացել է հետաքրքրությունը արևմտահայերենի նկատմամբ: Հայաստանում և Սփյուռքում գրվել են տեսական աշխատանքներ, հրատարակվել են բառարաններ, ստեղծվել և ստեղծվում են նոր դասագրքեր ու ձեռնարկներ: Սփյուռքը լավագույնս ճանաչելու և Սփյուռքի հետ համագործակցությունը գործնականում կազմակերպելու համար չափազանց կարևոր է ոչ միայն Սփյուռքը ձևավորող բաղադրիչների ճանաչումը, այլև արևմտահայերենի խոր իմացությունը: Արևմտահայերենի հնչյունաբանության ու բառապաշարային հարցերը տարբեր ուսումնասիրություններում հիմնականում ստացել են իրենց գիտական լուծումները, սակայն քերականության մեջ բաց են մնում մի շարք սկզբունքային հարցեր (առկայացման կարգը, բայի եղանակները, հոլով և հոլովում, բայի սեռը և այլն): Այս առումով առաջնահերթ խնդիր է արևմտահայերենի գիտական քերականության ստեղծումը (ձևաբանություն, շարահյուսություն), որը կարող է չափանմուշային (էտալոնային) դառնալ հետագա ուսումնասիրողների համար: Այն միաժամանակ կարող է միավորիչ դեր ունենալ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում գործող գերակա լեզուների ազդեցությամբ գրված ուսումնասիրությունների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով հայոց լեզվի ամբիոնի հիմնավորումը թեմայի գիտական, խնդրադրությային և գործնական նշանակության մասին՝ երաշխավորել «Արևմտահայերենի գիտական քերականություն» թեման պայմանագրային ֆինանսավորման ծրագրային գիտական մրցույթին մասնակցելու համար:

5. ԼՍԵՑԻՆ – Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Սաֆարյանի «Ժանրի և էպիկականության տրոհումը ետդասական պատմագրության մեջ» թեման ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման թեմաներում ընդգրկելու հարցը:

ԱՐՏԱՂԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Զ. Ավետիսյանը և Ս.Մուրադյանը:

Նշվեց, որ Հայ պատմագրության մասին ստեղծվել են մեծաքանակ բանասիրական-աղբյուրագիտական հետազոտություններ: Նախագծի նպատակն է 5-րդ դարին հաջորդած դարաշրջանների հայ պատմագրության գիտական ու գեղարվեստական վերլուծությամբ ցույց տալ նմանողական ոճի տարրերը, կերպավորման կամ պատմական դեպքերի ու դեմքերի էպիկականության տրոհումները, ժանրային սահմանազատման ընթացքը, որոնք կպարզորոշեն հայ գեղարվեստական մտքի զարգացման օրինաչափությունները և դրանցով՝ անցումը պատմագրության համադրականությունից (սինկրիտիզմից) դեպի զուտ գեղարվեստական ժանրային դրսևորումները՝ որպես նաև նոր ու նորագույն շրջանի հեղինակների ոճամտածողական առանձնահատկությունների ծագումնաբանական հիմքերից մեկը կամ գենեզիսը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով ամբիոնի հիմնավորումը թեմայի գիտական, խնդրադրությային և գործնական նշանակության մասին՝ երաշխավորել «Ժանրի և էպիկականության տրոհումը ետդասական պատմագրության մեջ» թեման պայմանագրային ֆինանսավորման ծրագրային գիտական մրցույթին մասնակցելու համար:

6. ԼՍԵՑԻՆ. - Բան. գիտ. թեկնածու, դոցենտ Խաչիկ Սամվելյանի «Րաֆֆի /Հակոբ-Մելիք-Հակոբյան/ «Երկերի ժողովածու» /14-րդ հատոր/» թեմայի ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման թեմաներում ընդգրկելու հարցը:

ԱՐՏԱՂԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ Խ. Սամվելյանի առաջադրած գիտական թեմայի նպատակն է Րաֆֆու 13-րդ հատորից դուրս մնացած անտիպ գործերի հայտնաբերումն ու հրատարակությունը առանձին գրքով՝ 14-րդ հատոր: Հատորում պետք է ներառվեն դեռ լույս չտեսած Րաֆֆու ծածկանուններով անստորագիր հոդվածներ, գրառումներ,

նամակներ, բանավեճեր, տակավին անհայտ գործեր, որոնք արդեն հայտնաբերել ենք տարբեր պարբերականներում: Այս բազմաթիվ գործերը կարևոր նշանակություն են տալիս գրողի ապրած կյանքի հանգամանքների, շրջապատի մարդկանց ու հասարակական երևույթների հանդեպ նրա դրսևորած վերաբերմունքին:

2-րդ հարցի առիթով տեղի ունեցավ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում (տե՛ս համապատասխան քաղվածքները):

Ընթացիկ հարցերում քննարկվել են հետևյալ հարցերը.

ԼՍԵՑԻՆ – «Լեզվաբանություն» և «Գրականագիտություն» մասնագիտությունների գծով ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամների ընտրություններին հայ բանասիրության ֆակուլտետի կողմից ներկայացվող գիտնականների թեկնածությունների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Եզեկյանը, Յ. Ավետիսյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ա. Աբրահամյանը և Ա. Բեքմեզյանը:

Նշվեց, որ հայ բանասիրության ֆակուլտետում գիտամանկավարժական գործունեություն են ծավալում նշանավոր մի շարք գիտնականներ, սակայն ՀՀ ԳԱԱ-ի կողմից 2010թ. հայտարարված՝ թղթակից անդամի մրցույթին մասնակցելու համար խորհուրդն առաջադրում է «Լեզվաբանություն» մասնագիտության գծով Լևոն Կորյունի Եզեկյանի և Լիանա Սամվելի Հովսեփյանի թեկնածությունները, իսկ «Գրականագիտության» գծով՝ Սամվել Պարույրի Մուրադյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ՀՀ ԳԱԱ-ի հայտարարած՝ թղթակից անդամի մրցույթին մասնակցելու համար առաջադրել «Լեզվաբանություն» մասնագիտության գծով Լևոն Կորյունի Եզեկյանի և Լիանա Սամվելի Հովսեփյանի, իսկ «Գրականագիտության» գծով՝ Սամվել Պարույրի Մուրադյանի թեկնածությունները:

Լ Ս Ե Ց Ի Ն.- Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի հայցորդ **Կարինե Պողոսի Պողոսյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի հստակեցման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ռ. Սաքապետոյանը և Լ. Եզեկյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.- Հաստատել հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի հայցորդ **Կարինե Պողոսի Պողոսյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ հետևյալ հստակեցմամբ՝ «Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» երկի լեզուն» (բառապաշարային և քերականական իրողություններ)»՝ ժ. 02. 01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ: Գիտական ղեկավարն է բանասիրական գիտությունների դոկտոր Գուրգեն Մուշեղի Մանուկյանը: